ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ ՍԱՐԳԻՍ ՏԵՐ-ԵՍԱՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Տեր-Եսայան,

ի պատասխան Ձեր 30.03.2026թ. հ. 80-2026թ. գրության՝ Տոլստոյի և Նար-Դոսի փողոցների խաչմերուկում առկա դիտահորի խնդրի վերաբերյալ տեղեկացվում է.

2017 թվականի հունվարի 1-ից մեկնարկել է ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի ծառայությունների մատուցման Վարձակալության պայմանագիր, որի կողմերն են հանդիսանում Ջրային կոմիտեն՝ որպես Վարձատու և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն՝ որպես Վարձակալ:

Ներկայացված խնդրի կարգավորումը գտնվում է Ջրային կոմիտեի, «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի և(կամ) սեփականատերերի պատասխանատվության ներքո:

Այնուամենայնիվ, հաշվի առնելով հարցի կարևորությունը՝ Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կողմից Տոլստոյի և Նար-Դոսի փողոցների խաչմերուկում առկա դիտահորի խնդրի վերաբերյալ միջնորդագիր է ուղարկվել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ՝ խնդիրն ուսումնասիրելու և կարգավորելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ